

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ի՞նչ երազոտքեանք պիտի ընքա-
նայ մարդ երկրիս վրայ, որպէս զի
միշտ լուսին տեսնէ: Եւ մեկնելով
Պարիսէն՝ յառաջին քառորդին, ի՞նչ
ձառքայ պիտի կտրէ:

Նախ յիշատակենք՝ որ լուսինն կը
կատարէ երկրիս շուրջ իւր օձապտոյտ
շրջանն 29 օր 12ժ. 44Վ. 2ժ. $\frac{9}{10}$
մէջ. իւր անկիւնային երազութիւնն
գրեթէ միշտ նոյն է, այսինքն՝ ժա-
մու մէջ միջին հաշուով 0° 50795
արևմուտքէն դէպ արևելք: Արգ նոյն
ուղղութեամբ երկիրս ժամու մէջ իւր
առանցքին վրայ 15° կը դառնայ իւր
քնակաչօք: Մէկն որ լուսնի հետ
անոր ծագման պահուն կը գտնուի
միևնոյն միջօրէականի տակ, որպէս
զի կարենայ անոր հետ ընթանալ,
պարտի մէկ ժամու մէջ անոր հետ
16° 49205 վազել դէպ ի մուտս: Իւր
ընթացքին մէջ նոյն զուգահեռագծի
վրայ կրնայ կենալ՝ կամ բեռելն մեր-
ձենալով և կամ հասարակածին. միայն
թէ 61° 15 լայնութեան աստիճանը
չանցնի. որովհետև լուսինն տեսանելի
չէ անկից աւելի վեր աստիճանաց
վրայ, երբ ընթացակցին հակառակ
կիսագնդոյն վրայ գտուի. և պատճառն՝
է լուսնի պարունակին հակումն հա-
սարակածի վրայ:

Օրինակի համար, մարդ մի կրնար
Պարիսէն՝ յունուարի չորսին, լուսնի
առաջին քառորդին, երեկոյեան 6. 14
ժամուն, երբ լուսինն կ'անցնէր Պա-
րիսու միջօրեականէն, և ընթանալ
դէպ ի մտից կողմն 48° 50 լայնու-
թեան գծով, ընթանալով 14° 4920ի
ժամու: Պիտի հանդիպէր Գրանա-

կերդի, պիտի անցնէր Աղլանտ Ով-
կիանն, պիտի տեսնէր Նոր երկիրը,
վակուվեր կղզին, պիտի կտրէր Խա-
ղաղական ովկիանոսն, պիտի շրջէր ի
Յապոնս՝ ի Ճինս և հարաւային Ռու-
սիա, և յունուարի 5ին պիտի հաս-
նէր ի Ռումանիա մերձ յԱւսպիտ Ե-
րեկոյեան 6 ժամուն, և վերջապէս ի
Պարիս 7ժ. 1Վ. 28ժ. գրեթէ նոյն պա-
հուն՝ երբ լուսինն կը վերադառնար
իւր միջօրէականը ի 6ժ. 55Վ. Եւ այս-
պէս ամբողջ զուգահեռականն 24ժ.
55Վ. 28ժ. ի մէջ ընթացած կը լինի-
այն է 26330 հազարամետր, որ 294.
40 մետր առ մանրերկրորդ. այս Ե-
րազութիւնս պահելով անընդհատ,
երբեք լուսինը չպիտի կորսցնէ աչաց
տեսութենէ:

Այս ոճով եթէ մէկը, օւզենայ Կ-
Պոլսէն ճամբայ ելնել, մարտի 22էն
ըստ արևելեան տուժարի՝ լուսնի ա-
ռաջին քառորդին՝ արևու մտնելէն
գրեթէ քսան վայրկեան առաջ 6 ժա-
մէն 1, 2 մանրերկրորդ անցած՝ այն
պահուն որ լուսինն Կ. Պոլսոյ միջօ-
րէականի վրայ կը հասնի, պէտք է
որ ճամբայ ելնէ 41° 16' լայնութեան
աստիճանով: Եւ պիտի հանդիպի հա-
րաւային Խալիթա, վոնիփակիոյ նե-
ղուցէ պիտի անցնի ի Մագրիդ. և
զիոյիմբրաս պիտի տեսնէ: Ալբան-
տեանը պիտի կտրէ՝ Նեւ-Եօրք պիտի
հասնի, Միացեալ Նահանգն կտրելով՝
Խաղաղականէն պիտի անցնի, Սոն-
կարայ նեղուցէն պիտի մտնէ ի Ճինս:

1. Յապոնի չհանդիպիր և ոչ այլ նորա
կղզեաց միոն, զի 1878 էն ի վեր կ'օրիփեան
կղզիք Ռուսաց անցաւ:

ստան , և Ռուսիոյ Թուրքաստանէն անցնելով բուն Թուրքաստան պիտի մտնէ , նազբից ծովն պիտի կտրէ , վրայէն անցնելով ի Տրապիզոն պիտի հասնի մարտի 23 ին՝ իբր երկելոսան 6 ժամուն , գրեթէ կէս ժամ առաջ աւրելու մտնելէն , և 7ին ժամանակները ի Կ . Պոլիս , գրեթէ ի նմին ժամանակի երբ լուսինն կ'անցնի երկրորդ անգամ Կ . Պոլսոյ միջօրէականէն . նատարելով բովանդակ 440 0' 16 լայնութեան աստիճան՝ 24^o . 55' 20" . ի մէջ . և ընթացած պիտի լինի 297 160 11 մետր , այն է ի մի վայրկենի ձայնի երազութեամբ ընթանալով 391 , 06 մետր . և այս երազութիւնս պահելով միշտ՝ լուսինը կը տեսնէ :

Բայց դատնք այլ ճամբայ մի՛ աւելի փոփոխ , յորում կրնայ հանգչիլ 25 օր 27 օրուան մէջ , մանրերկրորդի մէջ 500 մետր ընթանալով : Գնենք թէ շրջող մարդն գտնուի երկրիս բեռնին միոյն վրայ , և լուսինն ևս երկնից նոյն կիսագնդին վրայ . նա պիտի տեսնէ անոր հորիզոնին շուրջ ոլորին 24^o . 50' . 28" . 3 ժամանակի մէջ . և այս երեկոյթս այնչափ ժամանակ պիտի տևէ որքան ժամանակ որ լուսինն նոյն կիսագնդին վրայ կը գտնուի : Եւ այն օրն՝ որ երկրիս արբանեակն պիտի անցնի ի միւս կիսագունդն , մեր ուղեւորն այլ պէտք է անցնի միւս բեռնն՝ ընթանալով յեւելից դէպ ի մուտք՝ կոր գծի մ'ընելով . այնպէս որ լուսնի միջօրէականով ընթանայ և հասարակածն անցնի մի քանի վայրկեան առաջ կամ զկնի լուսնէն : Պիտի հասնի երկրորդ բեռն 24^o . 50' . 25" . 3 ընթանալէ վերջ , և այնքան ժամանակ կրնայ դադարել՝ որքան որ լուսինն նոյն երկնից կիսագնդին վրայ կը գտնուի . և այսպէս միշտ լուսինն պիտի տեսնէ : Արդ լուսնագարձային տեղութիւնն է 27^o . 7' . 43" ⁷/₁₀ շրջողն երկու անգամ միայն՝ և այն ի լուսնագարձին

պիտի ընթանայ 24^o . 50' . 28" ⁷/₁₀ , որպէս զի լուսնի տեղութենէ չվրիպի , և իւրաքանչիւր ընթացից մէջ բեռն է բեռն 42 , 660 հազարամետր տեղ պիտի կտրէ , որոյ միջին երազութիւնն 582 մետր կու գայ առ մի մանրերկրորդ , և իւրաքանչիւր ընթացից մէջ ⁷/₁₀ լայնութիւն և 15^o երկայնութիւն պիտի կտրէ յարեւելից յարեւմուտք 1^o . 21' . 6" ⁷/₁₀ , ժամանակի մէջ :

Օրինակի համար եթէ շրջողն մեկնի Պարիսէն ի 4 յունուարի ի 6^o 11' երկոյեան , լուսինն որ այդ պահուն հիւսիսային կիսագնդին վրայ կը գտնուի , շրջողն այլ հասարակածէն պէտք է հեռանայ՝ երթալով դէպ հիւսիս արեւմուտք , առ 1^o . 21' . 6" . կտրելով 15^o երկայնութիւն և 7 ⁷/₁₀ լայնութիւն . և պիտի հանդիպի Հուսնայ , վիկտ կղզոյն , Բրիտանոյի որ է մերձ ի Դբլին , Գրուելանդի , Գրանտի աշխարհին , պիտի հասնի ի հիւսիսային բեռն ի 11^o . 44' . երկոյեան՝ և պիտի տեսնէ լուսինն ի հարաւակողմն : Պարիսէն մեկնած պահուն հորիզոնէն 53^o բարձր պիտի լինի լուսինն . և ուղեւորն որչափ ի բեռն մերձենայ , պիտի տեսնէ զայն որ դէպ ի հորիզոնն կը խոնարհի : Երբ ի բեռն հասնի , այլ ևս արեւ պիտի չտեսնէ , որովհետեւ սեպտեմբերի 23էն մինչեւ ի 20 մարտի , արեւն հարաւային կիսագնդի վրայ կը գտնուի . այլ կրնայ դրանչանալ հիւսիսային արշալուսոյն վրայ . պիտի տեսնէ որ լուսինն հորիզոնին շուրջ 24^o . 50' . 28" . ի մէջ կը դառնայ ամեն օր . եւ 15^o մինչև 27^o բարձրանալով հորիզոնէն վեր , յունուարի 9^o բարձրութեան վերջին կէտը հասած՝ կ'ըլլայ և ապա կը խոնարհի հեռոջհեռէ : Երբ մեր շրջողն տեսնէ զլուսինն մտնեցած հորիզոնին , այն օրն որ լուսինն հասարակածէն պիտի անցնի , որ է ի յունուարի 15՝ ի ժամ 10 ,

344 երեկոյեան, պէտք է ճամբայ
 ելնէ նոյն ուղղութեամբ և նոյն միջօ-
 րէականի տակ մնալով: Պիտի հասնի
 ի հարաւային բևեռ՝ 24^o . 50Ա . 28^o .
 ընթանալէն վերջ. և հոն կրնայ սքան-
 չանալ արևու. և լուսնի վրայ՝ որք
 հորիզոնին վերայ իրարու ետեւէ կը
 շրջին, այնքան ժամանակ՝ որքան որ
 լուսինն նոյն հարաւային կիսագնդի
 վրայ կը մնայ: (Իսկ մեկնելով Կ.
 Պոլսէն, երբ նախ հիւսիսայինն բևեռ
 հասնի, պիտի տեսնէ արևն և լուսինը
 որ կը փայլին հորիզոնէն վեր. և երբ
 ի հարաւ հասնի, պիտի տեսնէ միայն
 լուսինը և աստեղազարդ երկինքը):
 Այս հիւսիսէն դէպ ի հարաւ ընթա-
 ցից մէջ պիտի հանդիպի Նոր Զեմիայ,
 Պետրբուրգի, Սպանիոյ հիւսիս արև-
 մտեան կողման լուսիտանիոյ, Փոքր Ան-
 տիլեաց, Գալապագեայց՝ Պոմոտուաց
 և Ալկլանդ կղզեաց: Այս ոճով 18 ²/₃
 տարի բևեռէ բևեռ անցնելով լուսնի
 հետ, անընդհատ լուսին պիտի տեսնէ:

* *

Ապրիլ 12ի դէպքն. — 1895 տա-
 րին պիտի ներկայացնէ աստեղագի-
 տական և կրօնական տեսակետով նը-
 շանաւոր դէպք մի:

Աւագ ուրբաթ օրն՝ արևուն չուրջը
 գտնուող աստեղք ճիշտ նոյն դիրքը
 պիտի առնուն՝ ինչ որ էին Քրիստոսի
 խաչին վրայ մեռած օրն: Եւ այս
 դէպքս առաջին անգամն է որ պիտի
 պատահի 1862 տարիներէ ի վեր:

Սակայն 1862 ըսելով՝ կ'իմանամք
 Քրիստոսի մահուան լուսկանն, որ

բոս աւանդութեան իւր երեսունե
 երեք տարուան հասակին մէջ պատա-
 հած էր:

Արդ մերձակայ՝ աւագ ուրբաթ
 օրն (12 ապրիլի) առաւօտեան ի ժամ
 4 և 20 վայրկեան, լուսինն կուսի Հաս-
 կին առջևէն պիտի անցնի և ժամէ
 մ'աւելի պիտի ծածկէ այս համաս-
 տեղութիւնը:

* *

Քանակ ոսկոյ. — Յամին 1893
 ոսկոյ քանակն ընդ ամենն եղաւ
 254000 հազարադրամ, որ հաւասար
 է 807 միլիոն փրանկաց: Մինչդեռ
 1850 էն մինչև 1860 տարին՝ որ ոս-
 կեղէն դար կը համարուէր՝ կը հաս-
 նէր միջին համեմատութեամբ 201750
 հազարադրամի, որ հաւասար է 693
 միլիոն փրանկաց:

Ուստի և ակն յայտնի կ'երևի՝ որ
 տարուէ տարի կ'առաւելու ոսկոյ քա-
 նակն:

Գլխաւոր ոսկի բերող աշխարհներն
 են Միացեալ Նահանգ, որ յամին
 1893՝ ին 54100 հազարադրամ ոսկի
 յառաջ բերաւ, Աւստրալիա 53,698, Ա-
 փրիկէ 44, 096, Ռուսաստան 37,325,
 Ճինաստան 12,678, Կորէա 884, Յա-
 պոնիա 728 հազարադրամ:

| |
|---------|
| 54, 100 |
| 53, 698 |
| 44, 096 |
| 37, 325 |
| 12, 678 |

203, 509